

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ԹԵՄԱ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

**Հարգելի՛ ուսուցիչ**

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:  
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի  
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ  
ավելի ուշ:

**Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սնագրության համար:**

1 Որքա՞ն պետք է լինի ճիշտ սրված գրաֆիկական մատիտի բացված գրաֆիտե միջուկի չափը.

- 1) 5մմ
- 2) 8մմ
- 3) 6մմ
- 4) 4մմ

2 Կամայական կոր գծերի վերջնագծման համար նախատեսված է.

- 1) փոխադրիչը
- 2) կորաքանոնը
- 3) կարկինը
- 4) ձողակարկին

3 Որքան է A0 ձևաչափի թղթի կողերի երկարությունը.

- 1) 1189x841մմ
- 2) 594x841մմ
- 3) 1279x561մմ
- 4) 1279x951մմ

4 Եթե գծագրի վրա կան միմյանց զուգահեռ մի քանի չափագծեր ապա եզրագծին մոտ գրառում են՝

- 1) մեծ չափը
- 2) տասնորդական թիվը
- 3) փոքր չափը
- 4) զույգ թիվը

5 Ո՞ր գծով են պատկերում գծագրի համաչափության առանցքները և կենտրոնագծերը.

- 1) գծիկային գիծ
- 2) ալիքաձև գիծ
- 3) բարակ հոծ գիծ
- 4) գծակետային գիծ

6 Տրոնտալային V հարթությանը ուղղահայաց AB հատվածի ուղղանկյուն պրոյեկցիան հորիզոնական հարթության վրա կլինի՝

- 1) AB հատվածի իրական մեծության չափով հատված
- 2) AB հատվածի իրական չափից մեծ հատված
- 3) AB հատվածի 1/2 չափով հատված
- 4) AB հատվածի իրական չափից փոքր հատված

7

Ո՞ր տեսքն է ընդունվում որպես գծագրի գլխավոր տեսք.

- 1) տեսք ձախից
- 2) տեսք վերևից
- 3) տեսք դիմացից
- 4) տեսք ներքևից

8

Ուղիղ գծերի կառուցման ժամանակ մատիտը պետք է՝

- 1) լինի թղթին ուղղահայաց
- 2) թղթի նկատմամբ կազմի 45° անկյուն
- 3) փոքր ինչ թեքել շարժման հակառակ կողմը
- 4) փոքր ինչ թեքել շարժման կողմը

9

Գծերի անցկացման ո՞ր հաջորդականությունն է ճիշտ.

- 1) 1. առանցքային և կենտրոնական, 2. հորիզոնական ուղիղներ, 3. շրջանագծեր և աղեղներ, 4. կորագծեր, 5. ուղղաձիգ ուղիղներ, 6. թեք ուղիղներ
- 2) 1. առանցքային և կենտրոնական, 2. շրջանագծեր և աղեղներ, 3. կորագծեր, 4. հորիզոնական ուղիղներ, 5. ուղղաձիգ ուղիղներ, 6. թեք ուղիղներ
- 3) 1. առանցքային և կենտրոնական, 2. թեք ուղիղներ, 3. կորագծեր, 4. հորիզոնական ուղիղներ, 5. ուղղաձիգ ուղիղներ, 6. շրջանագծեր և աղեղներ
- 4) 1. առանցքային և կենտրոնական, 2. կորագծեր, 3. շրջանագծեր և աղեղներ, 4. հորիզոնական ուղիղներ, 5. ուղղաձիգ ուղիղներ, 6. թեք ուղիղներ

10

Քանի՞ տոկոս խոնավության դեպքում են չափում փայտի խտությունը.

- 1) 15%
- 2) 18%
- 3) 14%
- 4) 12%

11

Ծառի բնի որ շերտով են տեղաշարժվում օգտակար սննդանյութերը.

- 1) ենթակեղևային շերտ
- 2) նրբակեղևային շերտ
- 3) խցանային շերտ
- 4) կամբիումի բարակ շերտ

**12** Փայտանյութի կոնտակտային չորացման դեպքում մետաղական սալերը ի՞նչ ջերմաստիճանի են լինում.

- 1) մինչև 180°C
- 2) մինչև 170°C
- 3) մինչև 200°C
- 4) մինչև 150°C

**13** Ի՞նչ է նշվում տեխնոլոգիական քարտում.

- 1) գործողությունների կատարման հաջորդակալությունը, արտադրանքի տեսակը
- 2) փայտանյութի տեսակը, գործիքները և հարմարանքները
- 3) գործողությունների կատարման հաջորդականությունը, չափանշման եղանակները, գրաֆիկական պատկերները
- 4) գրաֆիկական պատկերումը, գործողությունների կատարման հաջորդականությունը, գործիքները և հարմարանքները

**14** Ինչպիսի՞ խարտոցների միջոցով է կատարվում սղոցների աստամների սրումը.

- 1) եռանիստ կամ քառանիստ
- 2) եռանիստ կամ շեղանկյուն
- 3) եռանիստ կամ կիսակլոր
- 4) եռանիստ կամ կլոր

**15** Թործում կատարելիս ի՞նչ դիրք պետք է ունենա դուրը մշակվող մաներևույթի նկատմամբ.

- 1) մշակվող մակերևույթին ուղղահայաց, սրված մասով ուղղված դեպի բնիկը
- 2) մշակվող մակերևույթին նկատմամբ 45° անկյան տակ թեքված, ուղղված դեպի աշխատողը
- 3) մշակվող մակերևույթին նկատմամբ 45° անկյան տակ թեքված, ողղված աշխատողին հակառակ կողմ
- 4) մշակվող մակերևույթին նկատմամբ 45° անկյան տակ թեքված, սրված մասով ուղղված դեպի բնիկը

**16** Սղոցանյութերի ծովածության ի՞նչ ձևեր գիտեք.

- 1) երկայնական, լայնական, փետրաձև
- 2) լայնական, պտուտակային, խաչաձև
- 3) երկայնական պարուրակային, փետրաձև
- 4) երկայնական, լայնական, պտուտակային

17

Ո՞րն է փայտանյութի կտրման համար նախատեսված կտրիչի սրման անկյունը.

- 1) առջևի և հետևի մակերևույթներով կազմված անկյունը
- 2) առջևի մակերևույթով և կտրման հարթությանն ողղահայաց հարթությունով կազմված անկյունը
- 3) հետևի մակերևույթով և կտրման հարթությամբ կազմված անկյուն
- 4) առջևի մակերևույթով և կտրման հարթությամբ կազմված անկյուն

18

Մեխերի առանցքների հեռավորությունը մանրաթելերին ուղղահայաց ուղղությամբ պետք է լինի ոչ պակաս քան`

- 1) 5d
- 2) 15d
- 3) 10d
- 4) 4d

19

Ի՞նչ ձև ունի փայտի մեջ շաղափված խուլ անցքի հատակը.

- 1) հարթ
- 2) կոնաձև
- 3) ուռուցիկ
- 4) խորդուբորդ

20

Ինչի՞ համար են օգտագործում տովրիկը(տովրիչը).

- 1) դժվար հասանելի տեղամասերի մշակման համար
- 2) շինվածքների մաքրատաշ մշակման համար
- 3) մակերևույթների վերջնական մաքրման և հղկման համար
- 4) նախնական, կոպիտ հղկման համար

21

Առողջ մարդու սննդի օրաբաժնում սպիտակուցների, ճարպերի և ածխաջրերի հարաբերակցությունը պետք է լինի մոտավորապես`

- 1) 1:1:4
- 2) 1:2:4
- 3) 1:1:3
- 4) 1:2:3

22

Ո՞ր շարքում են նշված միայն արմատապտղավորները

- 1) արմատային մաղաղանոս, արմատային նեխուր, բակլան, խավրժինը
- 2) գոնգեղ, ստեպղին, ճակնդեղ, շաղգամ, արմատային մաղաղանոս
- 3) արմատային մաղաղանոս, արմատային նեխուր, թրթնջուկ, անխոն
- 4) գոնգեղ, ճակնդեղ, խավրժիլ, բամբիա, շաղգամ, բողկ

23

Ո՞ր շարքի բոլոր վիտամիններն են ճարպալույծ

- 1) ADCB
- 2) ADPB
- 3) ADKE
- 4) ADPE

24

Ի՞նչ անել, որպեսզի աձեռոցիկները կանգուն լինեն ծալադրման ընթացքում և հաճելի՝ օգտագործելիս.

- 1) արդուկել
- 2) օսլայել
- 3) հենել սպասքին
- 4) ծալել մանր ծալքերով

25

Ո՞ր ջերմաստիճանից են ոչնչանում բուտուլիզմի հարուցիչները

- 1) 90°C-ից բարձր
- 2) 100°C -ից բարձր
- 3) 110°C -ից բարձր
- 4) 120°C -ից բարձր

26

Բարակ թերթամետաղից դետալների գրաֆիկական պատկերման ժամանակ ի՞նչ գծով են ցույց տրվում ծոման տեղերը.

- 1) գծակետային գծով
- 2) գծաերկկետային գծով
- 3) ալիքաձև գծով
- 4) բարակ գծով

27

Բարակ թերթամետաղի ուղղման ժամանակ մուրճի հարվածները  $n^{\circ}$  հատվածում են առավել ուժգին լինում.

- 1) կենտրոնական հատվածում
- 2) եզրային հատվածում
- 3) ուռուցիկ մասից հեռու հատվածում
- 4) ուռուցիկ մասին մոտ հատվածում

28

$\Omega$   $n^{\circ}$  պատկերն է կոչվում ֆրոնտալային պրոյեկցիա.

- 1) որը ստացվում է ZOX հարթության վրա պրոյեկտելիս
- 2) որը ստացվում է ZOY հարթության վրա պրոյեկտելիս
- 3) որը ստացվում է XOY հարթության վրա պրոյեկտելիս
- 4) որը ստացվում է XYZ հարթության վրա պրոյեկտելիս

29

Բարակ թերթամետաղը ժամալաքի ուղղությամբ կորագծով կտրելիս օգտագործում են՝

- 1) ձախ մկրատ
- 2) լծակավոր մկրատ
- 3) աջ մկրատ
- 4) փականագործական սղոց

30

Նշվածներից  $n^{\circ}$  ըը մետաղի մեխանիկական հատկությունն չէ.

- 1) պլաստիկություն
- 2) կարծրություն
- 3) ամրություն
- 4) կռելիություն

31

Նշվածներից  $n^{\circ}$  ըը փականագործական սղոցի մասն չէ

- 1) շրջանակ
- 2) բույթ
- 3) երկկանթանի մանեկ
- 4) հեղուս

32

Ի՞նչ մետաղի համաձուլվածք է բռնզը.

- 1) պղնձի և կապարի
- 2) անագի և ցինկի
- 3) կապարի և անագի
- 4) պղնձի և արույրի

33

Մետաղամշակման մեջ ձուլման կոման և այլ ոչ տաշեղահանման եղանակով մշակված մակերևույթները նշվում են՝

- 1) ✓
- 2) ▽
- 3) ∇
- 4) Rz

34

Ինչպե՞ս են ստուգում հատիչի սրման անկյունը.

- 1) փոխադրիչով
- 2) անկյունաչափով
- 3) աչքաչափով
- 4) ձևանմուշով

35

Ի՞նչ հիմունքով են խարտոցները բաժանվում վեց համարների.

- 1) ըստ խարտոցի երկարության
- 2) ըստ խարտոցի աշխատամասի 10մմ երկարության վրա եղած ծրատվածքների թվի
- 3) ըստ խարտոցի աշխատամասի 10մմ երկարության վրա եղած ծրատվածքների խոշորության
- 4) ըստ խարտոցի աշխատամասի հաստության

36

Ի՞նչ եղանակով են ստանում 5մմ-ից փոքր տրամագիծ ունեցող մետաղալարերը.

- 1) լարագլոցման եղանակով
- 2) ձողի շուրջը ձգելով
- 3) թելքակորզման եղանակով
- 4) ձուլման եղանակով



37

Ի՞նչ դուր են օգտագործում փայտի փորագրության ժամանակ փոքր խորության երկնիստ փորվածքներ կատարելու համար.

- 1) հարթ ուղիղ
- 2) հարթ շեղ (շեղակ)
- 3) անկյունային
- 4) ճոռաձև

38

Ինչպե՞ս են անվանում փայտի ռելիեֆային փորագրության այն տեսակը, երբ պատկերի ուռուցիկ մասը հետին պլանի մակերևույթից բարձր է իր ծավալի կես չափից ավելի.

- 1) հարթաքանդակ
- 2) բառելիեֆ
- 3) գոռելիեֆ
- 4) մակրոռելիեֆ

39

Փայտի փորագրության ժամանակ ինչ գործողություն են կատարում շեղակով.

- 1) մակակտրում և կտրում
- 2) տաշում
- 3) հղկում
- 4) կորագիծ կտրում

40

Արաբերեն  $n^{\circ}$  բառից է ծագել «Մաքրամե» անվանումը.

- 1) մանհապուդ
- 2) միհրամախ
- 3) մանխայամ
- 4) մարես

41

Նշվածներից  $n^{\circ}$  ըն է սինթետիկ մանրաթել.

- 1) վիսկոզա
- 2) ացետատ
- 3) լավսան
- 4) ջուտ

42

Ո՞ր թելատու բույսի տերևների վրա է առաջանում բուսական մանրաթել.

- 1) ջուտ
- 2) մետաքսածառ
- 3) վուշ
- 4) արմատավուշ

43

Կանացի հագուստի չափափորձման ժամանակ դերձակը շտկումները հագուստի ո՞ր հատվածում է կատարում.

- 1) աջ կիսամասի վրա
- 2) ձախ կիսամասի վրա
- 3) կենտրոնական հատվածում
- 4) հագուստի հակառակ կողմում

44

Նշվածներից ո՞րը բամբակե գործվածք չէ.

- 1) սատին
- 2) վուշ
- 3) բատիստ
- 4) մարկիզետ

45

Ի՞նչ ուղղությամբ են դասավորված հենքաթելերը գործվածքներում.

- 1) ուղղված են գործվածքի երկայնքով
- 2) ուղղված են գործվածքի լայնքով
- 3) ուղղված են գործվածքի անկյունագծով
- 4) դասավորված են անկանոն

46

Ի՞նչ է թակալակարը.

- 1) հիմնական կարի տեսակ է, որի կարակուրթի նվազագույն հեռավորությունը 0,2-0,7մմ է
- 2) ժամանակավոր բնույթ կրող կարի տեսակ է, որի կարակուրթի նվազագույն հեռավորությունը 0,2-0,7մմ է
- 3) հիմնական կարի տեսակ է, որի կարակուրթի նվազագույն հեռավորությունը 0,5-0,7մմ է
- 4) մեքենայակար է, որի կարակուրթի նվազագույն հեռավորությունը 0,2-0,7մմ է

47

**Ի՞նչ է ձևանք.**

- 1) էսքիզ
- 2) բնական չափերի գծագիր
- 3) տեխնիկական նկար
- 4) նկար

48

**Յուրաքանչյուր հաստոց կազմված է ոչ պակաս քան երեք բաղադրամասից՝**

- 1) շարժիչից, մատուցման մեխանիզմից, աշխատանքային օրգանից
- 2) շարժիչից, փոխանցման մեխանիզմից, մատուցման մեխանիզմից
- 3) շարժիչից, փոխանցման մեխանիզմից, աշխատանքային օրգանից
- 4) շարժիչից, ղեկավարման մեխանիզմից, մատուցման օրգանից

49

**Խառատային հաստոցի վրա ո՞ր շարժումն է համարվում գլխավոր շարժում.**

- 1) մատուցման շարժում
- 2) կտրող գործիքի պտտական շարժում
- 3) նախապատրաստվածքի պտտական շարժում
- 4) լայնական և երկայնական շարժում

50

**Ի՞նչ տեսք ունի պինդի ներսի անցքը**

- 1) գլանական տեսք
- 2) կոնական տեսք
- 3) ձևավոր տեսք
- 4) օվալաձև տեսք

51

**Մետաղների մշակման հորիզոնական ֆրեզերային հաստոցի մաս չէ.**

- 1) բարձակ
- 2) սեղան
- 3) հենոց
- 4) կապիչ

52

**Ի՞նչ է ցույց տալիս կարի մեքենայի ասեղի համարը.**

- 1) որքան մեծ է համարը, այնքան ասեղը ամուր է
- 2) որքան մեծ է համարը, այնքան ասեղը հաստ է
- 3) որքան մեծ է համարը, այնքան ասեղը բարակ է
- 4) որքան մեծ է համարը, այնքան ասեղը որակով է

53

Կարի մեքենայի ասեղի ո՞ր հատվածում է գտնվում կարճ ճոռիկը.

- 1) ասեղի պոչամասին
- 2) ասեղի հետևից
- 3) ասեղի առջևից
- 4) ասեղի գլխիկին

54

Ի՞նչ է ցույց տալիս կարի մեքենայի թելի համարը.

- 1) որքան մեծ է համարը, այնքան հաստ է թելը
- 2) որքան մեծ է համարը, այնքան ամուր է թելը
- 3) որքան մեծ է համարը, այնքան որակով է թելը
- 4) որքան մեծ է համարը, այնքան բարակ է թելը

55

Ինչպիսի՞ ֆրեզ են օգտագործում առվակներ ստանալու համար.

- 1) կտորահատ
- 2) ծայրային
- 3) գլանական
- 4) ձևավոր

56

Արհեստական մանրաթելերը ստանում են՝

- 1) բնական պոլիմերներից
- 2) լավսանից
- 3) կապրոնից
- 4) ջուտից

57

Ինչպիսի՞ն կարող է լինել դիմադրությունը կախված հաղորդչի հաստությունից.

- 1) որքան հաստ է հաղորդիչը այնքան փոքր է դիմադրությունը
- 2) որքան հաստ է հաղորդիչը այնքան մեծ է դիմադրությունը
- 3) որքան հաստ է հաղորդիչը այնքան փոփոխական է դիմադրությունը
- 4) որքան հաստ է հաղորդիչը այնքան հաստատուն է դիմադրությունը

58

Ի՞նչ է հոսանքի ուժը.

- 1) դա այն էլեկտրական լիցքն է, որը ժամանակի միավորի ընթացքում ազդում է հաղորդչի վրա
- 2) դա այն էլեկտրական լիցքն է, որը ժամանակի միավորի ընթացքում անցնում է հաղորդչով
- 3) դա այն ուժն է, որը ազդում է հաղորդչի վրա
- 4) դա այն ուժն է, որը հանդիսանում է էլեկտրական հոսանքի առաջացման պատճառ

59 Ո՞ր մեքենան աշխատանքային չէ.

- 1) կենցաղային
- 2) փոխադրիչ
- 3) տեխնոլոգիական
- 4) կիրեռնետիկական

60 Այլ մարմինների ազդեցությամբ մետաղի՝ դեֆորմացիայի դիմանալու ընդունակությունը կոչվում է՝

- 1) ամրություն
- 2) կարծրություն
- 3) պլաստիկություն
- 4) տեխնոլոգիականություն

61 Նախապատրաստվածքը շինվածքի վերածելու համար կատարվող գործողությունների ամբողջությունը կոչվում է՝

- 1) տեխնոլոգիական գործընթաց
- 2) տեխնիկական գործընթաց
- 3) արտադրական գործընթաց
- 4) ավարտական գործընթաց

62 Քանի՞ մասի է բաժանված 0,1մմ ճշգրտությամբ ձողակարկինի նոնիուսի սանդղակը.

- 1) 8
- 2) 10
- 3) 11
- 4) 9

63 0,1մմ ճշգրտությամբ ձողակարկինի նոնիուսի սանդղակի յուրաքանչյուր բաժանումը հավասար է.

- 1) 0,25մմ
- 2) 1,9մմ
- 3) 1մմ
- 4) 1,5մմ

**64** Նշվածներից ո՞րը խարտոցման տեսակ չէ.

- 1) լայնական
- 2) երկայնական
- 3) ուղղաձիգ
- 4) շրջանաձև

**65** Կաթնամթերքի ո՞ր տեսակին են անվանում լոռ.

- 1) պանիր
- 2) թթվասեր
- 3) կաթնաշոռ
- 4) սերուցք

**66** Մետաղի այն հատկությունը, որը թույլ է տալիս նոր ձևի ստացում հարվածների օգնությամբ կոչվում է՝

- 1) եռակցելիություն
- 2) կռելիություն
- 3) ծռում
- 4) գոդում

**67** Որքա՞ն պետք է կազմի հատիչի թեքման անկյունը մամլակի շուրթերի եզրերի նկատմամբ.

- 1)  $30...40^\circ$
- 2)  $45...60^\circ$
- 3)  $65...70^\circ$
- 4)  $20...25^\circ$

**68** Մետաղամշակման ինչպիսի՞ գործընթաց է արջումբ.

- 1) հղկում
- 2) հատում
- 3) ձուլում
- 4) վերջնամշակում

69

Ո՞ր գործվածքների հենքաթելերն ու միջնաթելերը ունեն միևնույն հաստությունը ու խտությունը.

- 1) սարժային
- 2) ատլասային
- 3) քաթանային
- 4) սատինային

70

Ո՞ր փոխանցման մեխանիզմի դեպքում է պտտման առանցքները միմյանց ուղղահայաց.

- 1) ատամնաքանոնավոր փոխանցում
- 2) շղթայավոր փոխանցում
- 3) գլանական ատամնավոր փոխանցում
- 4) կոնական ատամնավոր փոխանցում

71

Ո՞ր դազգահներն են օգտագործում միայն փայտի մշակման համար.

- 1) ատաղձագործական
- 2) փականագործական
- 3) կոմբինացված
- 4) շինարարական

72

Գամման ժամանակ որքա՞ն պետք է անցքի տրամագիծը մեծ լինի գամի տրամագծից.

- 1) 0,6-0,9մմ-ով
- 2) 0,1-0,3մմ-ով
- 3) 1-2մմ-ով
- 4) 1-1,5մմ-ով

73

Հագուստի խնամքի ո՞ր պայմանական նշանն է պատկերված.



- 1) կարելի է օգտագործել ցանկացած լուծիչ
- 2) կարելի է օգտագործել ցանկացած լուծիչ, բացի եռքլորէթիլենից
- 3) քիմաքրումն արգելված է
- 4) կարելի է ենթարկել քիմաքրման

74 Նշվածներից ո՞րը շաղափի տեսակ չէ.

- 1) գդալաձև
- 2) փետրաձև
- 3) պտուտակաձև
- 4) դանակաձև

75 Ո՞ր կողմում պետք է լինի մեխի գլխիկը տարբեր հաստությամբ դետալներ միացնելու դեպքում.

- 1) բարակ դետալի կողմում
- 2) հաստ դետալի կողմում
- 3) միացման կենտրոնում
- 4) երկու կողմում էլ

76 Նշվածներից ո՞րը երկրաչափական փորագրության տար չէ.

- 1) լապտեր
- 2) ճառագայթ
- 3) աչիկ
- 4) շրջանագիծ

77 Նշվածներից ո՞րը պալարապտղավոր բանջարփղեն չէ.

- 1) կարտոֆիլ
- 2) բաթաթ
- 3) գետնատանձ
- 4) գազար

78 Ո՞ր փոխանցման մեխանիզմի պայմանանշանն է պատկերված



- 1) փոկավոր փոխանցում
- 2) ատամնաքանոնավոր փոխանցում
- 3) շղթայավոր փոխանցում
- 4) գլանական ատամնավոր փոխանցում



79

Որքա՞ն կփոքրանա նախապատրաստվածքի տրամագիծը  
խառատապտուտակահան հաստոցի լայնական մատուցման բռնակլին լիմբի  
միջոցով մեկ բաժանում մատուցման դեպքում.

- 1) 0,025մմ
- 2) 0,25մմ
- 3) 0,05մմ
- 4) 0,5մմ

80

Ոսկե հատույթի ո՞ր բանաձևն է ճիշտ.

- 1)  $(a+p):a=a:p$
- 2)  $(a+p):p=a:p$
- 3)  $(a+p):a=p:a$
- 4)  $(a+p):p=p:a$